ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻՆ

Մրցույթի ծածկագիր ICARE- AC010/AM/21

Առաջարկները ներկայացնելիս պետք է հաշվի առնել հետևյալ պայմանները.

1. Ֆինանսավորում

   1.1. «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի (ICARE) կողմից իրականացվող «Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման ճամբար (ԱԳՐԻ ՔԵՄՓ)» ծրագիրը, որով կատարվելու են վերանորոգման աշխատանքները, ֆինանսավորվում է ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) կողմից:

2. Սահմանափակումներ ապրանքների աղբյուրի և ծագման վերաբերյալ

   2.1. ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալությունը հատուկ կանոններ է սահմանել իր կողմից ֆինանսավորված ծրագրերի շրջանակներում մատակարարված ապրանքների և ծառայությունների աղբյուրի, ծագման և մատակարարների գրանցման երկրի վերաբերյալ:

   2.2. Մասնակիցը երաշխավորում է, որ բոլոր մատակարարվելիք ապրանքները ծագում են թույլատրված աշխարհագրական տարածքից, այսինքն՝ այն երկրներից, որոնք ընդգրկված են ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության կանոններում թվարկված 937 (ԱՄՆ) կամ 110 (ԱՊՀ) կոդերում:

   2.3. Կապալառուն և «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը պետք է պահպանեն վերը նշված թույլատրված աշխարհագրական տարածքից մատակարարվող ապրանքների և ծառայությունների աղբյուրի, ծագման և մատակարարների գրանցման երկրի ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության կանոններին համապատասխանության վերաբերյալ պարտավորությունները:

3. Սերտիֆիկատներ

   3.1. Կապալառուն պետք է ներկայացնի պատշաճ փաստաթղթեր բոլոր ապրանքների աղբյուրի, ծագման և որակի ստանդարտներին համապատասխանության մասին: Կապալառուն ինքն է կրում տվյալ փաստաթղթերի ձեռք բերման հետ կապված ծախսերը:

4. Հարկեր

4.1. «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը ծրագրի շրջանակում գնումներ կատարելուց ազատված է ԱԱՀ (Ավելացված արժեքի հարկ) վճարելուց:

5. Բեռնափոխադրում, ադմինիստրատիվ ծախսեր և այլ հարկեր (բացառությամբ ԱԱՀ)

5.1. Ըստ ԱՄՆ ՄԶԳ-ի հետ կնքված No.72011120CA00001 պայմանագրի՝ «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը փոխհատուցում է միայն աշխատավարձի և նյութերի հետ կապված ծախսերը: Ուստի խնդրում ենք. ա/ նյութի արժեքում ներառել գնման և տեղափոխման հետ կապված բոլոր ծախսերը և հարկերը, բ/ աշխատանքի արժեքում ներառել բոլոր ծախսերը աշխատանքը կազմակերպելու համար (այլ բեռնափոխադրման, պահեստավորման, վերադիր ծախսեր և այլն), շահույթը, ՀՀ-ում գործող բոլոր հարկերը բացառությամբ ԱԱՀ:

6. Հատուկ պայմաններ

6.1. Ծրագրի իրականացման հետ կապված ծախսերի նվազեցման նպատակով «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը իրեն պայմանագր(եր)ում նշված որոշ նյութերի ձեռք բերման իրավունք է վերապահում:

6.2. Վճարման կարգի մասին պայմանագրային պայմանների նախնական մանրամասներ՝
ա/ Պատվիրատուի կողմից կանխավճարի տեսքով վճարում չի կատարվում,
բ/ Կատարված աշխատանքների դիմաց վճարում կկատարվի ամսական կտրվածքով՝ կապալառուի կողմից ներկայացված և Հիմնադրամի կողմից վավերացված կատարողական ակտի հիման վրա,
գ/ Կապալառուի կողմից ներկայացված յուրաքանչյուր կատարողականի գումարից պահվում է երաշխիք 10%-ի չափով: Երաշխիքի դիմաց պահված գումարի 50%-ը կապալառուն կստանա աշխատանքների ավարտը հաստատող ընդունման ակտի վավերացումից հետո, իսկ երաշխիքի դիմաց պահված գումարի մյուս 50%-ը կապալառուն կստանա շահագործումից 6 (վեց) ամիս հետո:

7. Ծրարների ներկայացման պայմաններ

7.1. Հայտերը պետք է դրված լինեն փակ ծրարների մեջ, պետք է կնքված լինեն, ծրարների վրա պետք է նշված լինի ուղարկողի (մասնակցի) հասցեն և անվանումը, ստացողի «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի) հասցեն և անվանումը, մրցույթի ծածկագիրը, հետևյալ բառերը «Չբացել մինչև 2021թ. Հունիսի 17-ը ժամը 11:00»:

7.2. Մրցութային առաջարկները պետք է ներկայացվեն կնքված փակ ծրարների մեջ: Հաշվի առնելով COVID-19 համաճարակի առկայությունը մրցույթի առաջարկները կընդունվեն 2021թ. Հունիսի 16-ին, ժամը 10:00 մինչև 16:00 ընկած ժամանակահատվածում հետևյալ հասցեով՝

«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամ, ք. Երևան, Տերյան 74 փողոց, 5-րդ հարկ

8. «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը իրեն իրավունք է վերապահում ընդունելու կամ մերժելու որևէ Հայտ և չեղյալ համարելու մրցութային գործընթացը և մերժելու բոլոր հայտերը ցանկացած ժամանակ նախքան պայմանագրի շնորհումը առանց, հետևաբար, որևէ պարտավորության ենթարկելու տվյալ Հայտատուին կամ Հայտատուներին, կամ առանց պարտավորությունների բացատրություն տալ Հայտատուին կամ Հայտատուներին «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի գործողությունների հիմքերի վերաբերյալ:

9. Փաստաթղթերի ցանկ

9.1. Մրցութային ծրարները պետք է պարունակեն 2 փաթեթ՝ 1 Բնօրինակ և 1 Պատճեն.

1) Ձև 1՝ Մասնակցի հայտ
2) Ձև 2՝ Հայտարարագիր որակի և ծագման վերաբերյալ
3) Ձև 3՝ Կատարված աշխատանքների ցանկ (կից համապատասխան փաստաթղթերով)
4) Ձև 4՝ Ծավալաթերթ /կնքված/ (անհրաժեշտության դեպքում կպահանջվի նաև էլեկտրոնային տարբերակը)
5) Ձև 5՝ Անհրաժեշտ սարքավորումների և մարդկային ռեսուրսների առկայություն
6) Ձև 6՝ Հիմնական աշխատանքների նախնական ժամանակացույց
7) Կանոնադրության պատճեն
8) Պետռեգիստրի վկայականի պատճեն
9) Տեղեկանք հարկային պարտավորությունների վերաբերյալ

10) Տեղեկանք սպասարկող բանկից՝ բանկային տվյալների վերաբերյալ:
11) Բոլոր շինարարական լիցենզիաների պատճեններ:

10. Գնահատման հիմնական չափանիշներ

10.1. «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը ներկայացված հայտերը գնահատելու համար սահմանում է ներքո շարադրված հիմնական չափանիշները:

a) Աշխատանքների կատարման խելամիտ սահմաններում առաջարկվող գինը, որը չի գերազանցի նախահաշվային արժեքը (11,764,432 ՀՀ դրամ առանց ԱԱՀ):
b) Հայտատուի նմանատիպ աշխատանքներ կատարելու փորձը, ներառյալ վերջին երեք տարիների ընթացքում կատարած նմանատիպ աշխատանքների ծավալը, առավելությունը տրվելու է միջազգային դոնորների հետ աշխատանքների փորձին (USAID, WORLD BANK, IFAD, GIZ և այլն)
c) Առաջարկվող աշխատանքների կատարման ժամանակացույցը, որը պետք է լինի ոչ ավել քան 60 աշխատանքային օր:
d) Հայտատուի տեխնիկական, մարդկային և կառավարման ռեսուրսները

Գնահատման նպատակով «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը կարող է, Հայտատուի համաձայնությամբ, այցելել հայտատուի գրասենյակ, արտադրական տարածքներ և, հնարավորության դեպքում, հայտատուի՝ նախկինում կատարած նմանատիպ աշխատանքների օբյեկտներ:

Հայտում ներկայացված ծավալաթերթում /հիմք է ընդունվում Ծավալաթերթի կնքված բնօրինակը/ արտացոլված գները կստուգվեն «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի կողմից: Թվաբանական սխալների առկայության դեպքում «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը հիմք կընդունի ճշգրտված գինը: Նման սխալների առկայության դեպքում «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը կարող է հարցման միջոցով լրացուցիչ պարզաբանումներ պահանջել հայտատուից:

11. Այցելություն աշխատանքների իրականացման տարածք

Հայտատուի ցանկությամբ, «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը հայտատուների համար կտրամադրի Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Պռոշյան համայնք 5-րդ փողոց, 12-րդ նրբանցք, 1-ին տուն հասցեում գտնվող տարածքի մուտքի և ուսումնասիրությունների հնարավորություն:

12. Կոնտակտային անձ հարցումներին պատասխանելու համար

Հարցերի դեպքում պետք է դիմել «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի աշխատակից Կարեն Չախոյանին, 077-72-79-40 հեռախոսահամարներով: